ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան.

Ի պատասխան Ձեր 17.10.2019թ. հ.01/379 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի առկա հանրային տրանսպորտի միջոցներն իրենց տեխնիկական բնութագրերով և երթևեկության անվտանգության առումով նախատեսված չեն հեծանիվների տեղափոխման համար և այդ առումով կառուցվածքային ձևափոխությունների կատարումն անթույլատրելի է: Ըստ այդմ՝ հանրային տրանսպորտի միջոցների առջևի մասում հեծանիվ տեղափոխելու համար կախիչների նախատեսման հարցին նպատակահարմար է անդրադառնալ Երևանի ներհամայնքային նոր երթուղային ցանցի ներդրման պարագայում՝ ցանցի սպասարկմանը համապատասխան տրանսպորտային միջոցների ընտրության և ձեռքբերման գործընթացի իրականացման ժամանակ՝ հաշվի առնելով գործող նորմատիվ-իրավական ակտերով երթևեկության անվտանգությանը ներկայացվող պահանջները և հնարավորությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ